

ՀՀ մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի սոցիալական աջակցության տարածքային բաժիններում սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացների թեմաները

Հ/Հ	Թեմայի անվանումը	Թեմայի համառոտ նկարագիրը
1.	<b>Ընդհանուր մասնագիտական դասընթացներ</b>	
1.1.	Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության էությունը և նպատակները	Ներկայացվում են սոցիալական պաշտպանության առանձին ենթաօլորտները, նրանցում իրականացվող ծրագրերի համառոտ նկարագրերը
1.2.	Սոցիալական աջակցության ոլորտում վարվող քաղաքականությունը և ծրագրերը	Ներկայացվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը և իրականացվող ծրագրերը
1.3.	Սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող իրավական ակտերը	Ներկայացվում են «Սոցիալական աջակցության մասին» օրենքից բխող այլ իրավական ակտեր
2.	<b>Համակարգչային ընդհանուր դասընթացներ</b>	
2.1.	Օպերացիոն համակարգի կիրառական սկզբունքները	Ներկայացվում են օպերացիոն համակարգի աշխատանքի սկզբունքները, ֆայլային օբյեկտների ստեղծումը, որոնումը, պատճենումը, տեղափոխումը, անվանափոխումը, հեռացումը և վերականգնումը, ֆայլադարանների ստեղծումը
2.2.	Տեքստային խմբագրիչի կիրառական սկզբունքները	Տեքստային խմբագրիչի հնարավորությունների ներկայացում, տեքստի հավաքագրման և ֆորմատավորման կանոնների ներկայացում: Ինքնուրույն աշխատանքի կատարում
2.3.	Էլեկտրոնային աղյուսակի կիրառական սկզբունքները	Էլեկտրոնային աղյուսակում պարզագույն հաշվարկների և գրաֆիկների կառուցման հնարավորությունների ներկայացում: Ինքնուրույն աշխատանքի կատարում
2.4.	Համակարգչային արտաքին սարքեր, սկանավորող, տպող և պատճենահանող սարքեր, կրիչներ	Ներկայացվում է համակարգչի արտաքին մուտքային-ելքային սարքերի աշխատանքի սկզբունքները, ձևավորում ունկնդրի մոտ դրանք կիրառելու կարողություններ
2.5.	Էլեկտրոնային փոստ	Էլեկտրոնային փոստից օգտվելու կանոնները, դասակարգիչների սահմանումները, օգտվելու էթիկան

Հ/Հ	Թեմայի անվանումը	Թեմայի համառոտ նկարագիրը
2.6.	Օպերատորական հմտությունների ձևավորում	Կատարվում են գործնական վարժություններ ուղղված համակարգչային տեքստերի մուտքագրման հմտությունները զարգացնելուն
2.7.	«esocial.am», «elibsocial.am», «epension.am» առգիծ տեղեկատվական համակարգեր	«esocial.am», «elibsocial.am», «epension.am» առգիծ տեղեկատվական համակարգերի նպատակի, կառուցվածքի, տեղեկատվական ծառայությունների, դրանցից օգտվելու կարգի ներկայացում:
<b>3.</b>	<b>Հատուկ մասնագիտական դասընթացներ</b>	
3.1.	Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ	Ներկայացվում է ենթահամակարգի կառուցվածքը, սպասարկման առանձնահատկությունները, ստացվող և մուտքագրվող տեղեկատվությունը, կատարվում են գործնական վարժություններ
3.2.	Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ	Ներկայացվում է ենթահամակարգի կառուցվածքը, սպասարկման առանձնահատկությունները, ստացվող և մուտքագրվող տեղեկատվությունը, կատարվում են գործնական վարժություններ
3.3.	Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգ	Ներկայացվում է ենթահամակարգի կառուցվածքը, սպասարկման առանձնահատկությունները, ստացվող և մուտքագրվող տեղեկատվությունը, կատարվում են գործնական վարժություններ
3.4.	Դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի ընդհանուր կառուցվածքը և սպասարկումը	Ներկայացվում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի կառուցվածքը, սպասարկման առանձնահատկությունները, մուտքագրվող և ստացվող տեղեկատվությունը, կատարվում են գործնական վարժություններ
3.5.	Դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգին առնչվող այլ տեղեկատվական ենթահամակարգեր	Ներկայացվում է դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգին առնչվող այլ տեղեկատվական համակարգերից օգտվելու, դրանցից անհրաժեշտ տեղեկատվության ստացման ձևերը